Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 6 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիք գյուղի դպրոցի հիմնանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ջրամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն ու հետազոտություն» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մանկատան պատուհանների և դռների ճաղաշարերի պատրաստման ու տեղադրման», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու ճաղաշարերի պատրաստման ու տեղադրման» և «Սևանի Սուրբ Կարապետ եկեղեցու մկրտության ավազանի վերանորոգում» ծրագրերը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: